

նիցին բանք զնաւատոց Հայաստանեայց տուրք եկեղեցւոյ՝ առանց նախագննին տեսութեան եւ հրամանի Վինափառ Հայրապետի ամենայն Հայոց, եւ Սինօղիս, եւ ապա ընդ-հանրօրէն հրամանագրութեամբք պատօտիրեաց վիճակաւորաց Հայոց զի ընդ ձեռն առնական քաղաքական իշխանութեանց փութով ժողովեալ զամենայն օրինակս 10-րդ հատորոյ *Հիւսիսայիսյ* օրագրի 1860 ամի, եւ զամենայն հատորս *Վարդապետարանին կրօնի* վերոյիշեալ նազարեանցի, առաքեցեն իլետագայ տնօրէնութիւն Սինօղիս:

ՀՐԱՄԱՅՑԵՑԻՆ. նախ՝ զներկայացուցեալ ընդ ներկայ յայտարարական խնդրի Ազնոական Ուսեփայ Չերքեզեանց քաղուածս ոմանց հատուածոց իզանազան տպագրութեանց Ստեփաննոսի նազարեանց, յորս սրբութեան իմաստք հակառաք քրիստոնեական հաւատոյ ընդհանրապէս, եւ դաւանութեան Հայոց մասնաորապէս, եւ համանգամայն քարոզի լուսաբանութիւն, առաքեալ առ Տէր Փոխարքայն Կովկասու, խնդրել զտնօրէնութիւն Նորին Պաշտօնաւարութեան, յաղագս բոլակցելոյ ընդ որում հարկն է, առ ի արգելոյ Պարոն նազարեանցի չտպագրել ի *Հիւսիսայիսյ* օրագրի իւրոյ զաւարկայս վերաբերեալ ծիւից, խորհրդոց եւ դաւանութեան Հայաստանեայց տուրք եկեղեցւոյ, եւ եկեղեցականաց, եւ կամ զայլ ինչ գրեանս՝ յորս իցեն բանք զնաւատոց Հայաստանեայց եկեղեցւոյ, առանց նախատես քննութեան Բարձր Արժանապատուութեան Չերուս:

Հայրմանէ ծանուցեալ առանձին հրամանաւ պատուիրել. ինկրայ յառուկ պատասխանատուութեան Չերոյ՝ նախագննին նկատողութեամբ վերաքննեցիք զամենայն առաքելի առ Չեղ զտպագրելի կրօնական յօդուածս եւ կամ զայլ մատեանս՝ յորս իցին բանք զնաւատոց Առաքելական եկեղեցւոյ Հայոց, եւ ընդ Չերով պատասխանատուութեամբ բոլորեցիք իտիպ մօժանել զայնս, երկիւղիս ինակառակ դէպս պանանջողութեան բառ օրինաց:

Երկուրոյ, առ ի խաղաղելոյ զմիտս ժողովրդեան եւ բզգուշացուցանելոյ զհամօրէն համագգիս ի վնասակար գրուածոց Պարոն նազարեանցի, առաքմամբ վաւերական պատճենի Օրագրութեան Սինօղիս, կայացելոյ ի 12 յունիսի 1861 ամի, հրամանագրել Չեղ, Վիճակային Կոնսիստօրիային Հայոց Վրաստանի, եւ Հոգեւոր Կառավարութեան Հայոց Մոսկուայու, զի Դուք ընդ ձեռն *Մասեայ Աղաւնի* Լրագրի Չերոյ, երկրորդն յայտնեցէ խմբագրաց *Մեղու Հայաստանի* եւ *Կուռնի* անուանեալ լրագրաց, եւ երրորդն *Ճաւաղ* անուանեալ Լրագրոյ, զի նոյա խոսակցելի Օրագրութեան իւրեանց հրատարակեցեն զայնմանէ ի զիտութիւն եւ ի զգուշութիւն բոլոր համագգեաց մերոց: Ի 12 Մարտի 1862 ամի, ի վտար Էջմիածին:

ԱՆԳԱՄ ՍԻՆՏՈՒԻ, Մարդիս Վարդապետ Տէր Գաւաթարեան:

Ատենաղպիր, Սուրբիս Թաղիսնուսեանց:

ԱՍՈՐԻՔ, ՄԱՐՈՆԻՔ ԵՒ ՏԻՐԶԻՔ

Արեւելքի անուանի ազգերէն մէկը Ասորւոց ազգն է՝ Հայաստանի սահմանակից, եւ եկեղեցական կարգաց կողմանէ շատ բանի մէջ մեզի հետ նմանութիւն ունեցող: Այս ազգին ու նորա բնակած երկրին վրայ համառօտ տեղեկութիւն մը տալ կուզեմք մեր ընթերցողաց՝ աւելի անոր համար որ հասկըցուի թէ ինչ կողմանէ նման է անոր մեր ազգը, եւ ինչով կտարբերի անկից. վասն զի շատ եւրոպացի գիտուններ, եւս եւ քանի մը Հայեր եղած են որ Հայն ու Ասորին մէկ ազգ համարեր են, կամ գէթ նոյն լեզուն խօսող եւ նոյն դաւանանքի տէր ըսեր են Հայն ու Ասորին, որ յայտնի մեծ սխալ է:

Ասորւոց երկիրը սուրբ Դրոց մէջ Արամ կամ երկիր Արամայ ըսուած է, իսկ այժմ՝ արաբերէն Պերս-իւշ-Շամ՝ այսինքն երկիր Դաւնաւ կոսի կրօնի, որովհետեւ գլխաւոր քաղաքներէն մէկը Դաւնաւիս կամ Շամ քաղաքն է, ինչպէս որ մէկ գլխաւոր քաղաքն ալ է Բեւրիս կամ Հալեպ: Այս երկիրը հին ատենը իրեք կտոր կը բաժնուէր. բուն Ասորի՝ հիւսիսային կողմը՝ Հայաստանի սահմանակից, Փիւնիկի՝ ծովեզերքը, եւ Պաղեստին կամ Հրեաստէն՝ հարաւային կողմը: Իսկ Ասորւոց լեզուն արաբերէն է կամ արաբերենին մէկ

տեսակը, ուստի եւ հայերենին հետ այնչափ նմանութիւն ունի՝ որչափ եւ արաբերէնը:

Քրիստոսէ 700 տարի առաջ Ասորեստանեայց ու Բաբելոնացւոց թագաւորները արեւելին այս երկրին, յետոյ Պարսիկը, յետոյ Մակեդոնացիք եւ Սելեւկեանք՝ որ Անտիոք (Անթաքիս) քաղաքը հիմնեցին եւ իրենց մայրաքաղաք ըրին. բայց իրենք ալ վերջապէս Հռովմայեցւոց տէրութենէն նաւաճուեցան Քրիստոսէ 64 տարի առաջ, յետոյ Սասանեանց, եւ հռակ յետոյ Արաբացւոց, եզիպտացւոց եւ Օսմանեանց ձեռքն անցան:

Քրիստոնէութիւնը առաքելոց ժամանակէն հաստատուեցաւ Ասորւոց երկրին մէջ, եւ Քրիստոսի հաւատացելոց ֆրիսկոնայ ըսուելը Անտիոք քաղաքէն սկսաւ: Հինգերորդ դարուն մէջ երբոր Նեստորի աղանդը ելիստսի սուրբ Ժողովոյն մէջ դատապարտուեցաւ, Կոստանդնուպօլսոյ պատրիարքարանէն եւ Յունաց կայսեր ուրիշ երկիրներէն՝ քրշուած Նեստորականները՝ Ասորւոց երկիրը քաջուեցան ու իրենց մայրութիւնը տարածեցին Միջագետաց կողմերը: Իսկ վեցերորդ դարուն սկիզբները Քաղկեդոնի Ժողովէն վերջը քանի մը եւտիքականք եւս զնացին Ասորւոց մէջ, եւ այն տեղերը տարածեցին եւտի-




ՄԱՐՈՆԻՔ.

քական աղանդը: Որով Ասորւոց ազգը երեք մաս բաժնուեցաւ հաւատոյ կողմանէ. բուն Ասորիներն ըսուեցան Մելիի, այսինքն թաղաւորական, կամ Յունաց կայսերաց դաւանանքը պահող. մէկ մասը նեսորական (կամ նասրուրի), որ իրենք զիրենք անուանեցին Քաղդէացի (Քիլտանիք) կամ Արեւելայի, եւ երրորդ մասը եւսիփական կամ Յակոբիկ՝ իբրեւ հետեւողք Յակոբայ Ծանծալոսի: Աստի եւս յայտնի է թէ ինչպէս որ լեզուով տարբեր են Ասորիները Հայերէն, այսպէս նաեւ դաւանանքով. եւ մէկը շատ տգէտ պիտի լինի իւր եկեղեցւոյն եւ ուրիշ արեւելեան եկեղեցեաց դաւանութեանն որ ըսէ եւ գրէ եւս, ինչպէս որ ըրեր են ոմանք, թէ Հայոց եւ Ասորւոց դաւանութիւնը նոյն է:

Գանք Մարոնիներուն: Եկեղեցական պատմութեանէն յայտնի է որ Լիբանան լեռանց մէջ մինչեւ հինգերորդ դարուն ատենները հռապաշտներ շատ կային, որ սրբոյն Սիմէոնի սիւնակեցին քարոզութեամբը դարձան իբրիստոնէութիւն: Նոցա մէջէն Յովնանէս

Մարոն անունով սրբակաց կրօնաւոր մը եօթներորդ դարուն վերջերը գիրք մը շարագրեց ընդդէմ նեստորականաց եւ եւտիքականաց, եւ իրեն հետեւողները Մարոնի ըսուեցան, որ միաբան էին յունական եկեղեցւոյ հետ՝ ինչպէս նաեւ Մելքիթները: Բայց խաչակրաց ժամանակները՝ 1182-ին, Մարոնիներուն մէկ մասը միաբանեցաւ Հռովմայ եկեղեցւոյն հետ, եւ վեշտասաներորդ դարուն մէջ հռովմէական քարոզիչներուն հնարքովը գրեթէ ամէնքն ալ կաթոլիկ դարձան, թէպէտ եւ Ասորւոց եկեղեցւոյն արարողութիւններէն ալ մէկ քանին անփոփոխ պահեցին:

Քաղաքական վիճակի կողմանէ Մարոնիները իրենց լեռներուն ամրութեանը վստահացած՝ անգաղար պատերազմի մէջ են Տիւրքիներուն դէմ, որ Լիբանանու հարաւային կողմերուն բնակիչներն են, ու տաճկութենէ եւ քրիստոնէութենէ խառն կրօնք մը կը դաւանին, եւս եւ քաջ պատերազմող են եւ հիւրասէր, ինչպէս ամենայն լեռնաբնակ ազգերը:



Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք.

Թնդանօրին անձեւաբեր գորութիւնը. — Հասարակաց կարծիքն այս է սովորաբար՝ Թէ Թնդանօթին ծայնէն կամ Թնդմունքէն երկնքի երեսին ամպերը կցրուին ու անձրեւ գալու տեղը չորութիւն կպատճառի. բայց Ամերիկացի գիտուններէն մէկը շատ օրինակներով ու պատճառներով հաստատեց մօտերս Թէ ընդհակառակն Թնդանօթին Թնդմամբը չորութիւնը կդադրի եւ աւելի շատ անձրեւ կուգայ. վասն զի օդին ցնցուելովը՝ օդային գոլորշիները կխտանան կծանրանան ու անձրեւ կդառնան: Ասոր համար է, կըսէ, որ գրեթէ ամէն մեծ պատերազմներէ ետքը միշտ անձրեւ եկած է, ինչպէս նաեւ Սովիերինոյի պատերազմին ժամանակը, եւ անցեալ տարի ու այս

տարի Ամերիկայի պատերազմներուն ատենը գրեթէ ամէն օր անձրեւ կուգայ եղեր: — Եթէ այս դիտողութիւնը ստոյգ լինի, խաղաղասէր մարդիկ կրնան մխիթարուիլ՝ մտածելով Թէ աշխարհաւեր ու մարդախոշոշ Թնդանօթն եւս օգուտ մը ունի եղեր:

Լոնտոնի մեծութիւնը. — Լոնտոն մայրաքաղաքին այժմու մեծութիւնն է 121 անգղիական մղոն քառակուսի, որ ըսել է 181½ վերսթ քառակուսի: Ետքի 62 տարւոյս մէջ այս քաղաքը երեք անգամ աւելի ընդարձակուել է: Հաշիւ ըրեր են որ Լոնտոնի բնակիչներուն թիւը շաբաթը հազար հոգի կաւելնայ՝ նորածին տղայքն ու դրսէն եկող օտարականները համընթաց:

